ՀՀ Արագածոտնի մարզպետ Աշոտ Սիմոնյանի շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա և Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ բոլորիս Գիտելիքի օրվա և նոր ուսումնական տարվա կապակցությամբ:

Խոսքս ուղղում եմ բոլորին, քանզի այս տոնը ամենքինս է: Գիտելիքը ուժ է, առանց որի անհնար է առաջ ընթանալ, նոր և առաջադեմ նվաճումների հասնել: Գիտելիքը ամփոխարինելի զենք է հատկապես մեր ժողովրդի համար, քանզի աներկբա է, որ գիտության ամենատարբեր ոլորտներում ունեցած նվաճումներով մենք մրցում ենք մեծամեծ տերությունների հետ, միջազգային ասպարեզում ճանաչելի ու ներկայանալի դարձնում մեր հայրենիքը: Եվ ամենևին պատահական չէ, որ Գիտելիքի օրը նշում ենք հենց սեպտեմբերի 1-ին, ուսումնական նոր տարվա առաջին իսկ օրը:

Սիրելի՛ դպրոցականներ, ուսանողներ, կրթության գործընթացում ներգրավված մեր գործընկերներ, շնորհավորում եմ ձեզ Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ: Մաղթում եմ, որ նոր ուսումնական տարին լինի գիտելիքների ձեռքբերման, կրթության ու դաստիարակության նորանոր նվաճումների, հաջողությունների, առաջընթացի և հաղթանակների տարի:

Բարի երթ ձեզ՛ նոր ուսումնական տարում: